Տ. ԵՂԻՇԵ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-Ն ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

1938 թ. ապրիլի 10-ին նահատակ Խորեն Ա Կաթողիկոսի թիվ 620 կոնդակով Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը նշանակվում է Հայոց ընդհանրական Հայրապետության տեղապահ: Այդ առթիվ երջանկահիշատակ Խորեն Ա Կաթողիկոսն իր Սրբատառ Կոնդակում գրում է. «Ի նկատի առեալ զփորձառութիւն Ձեր յընթացս բազմամեայ եւ պատասխանատու պաշտօնավարութեանդ, նաեւ զխոհեմ, զհեռատես եւ շրջանկատ բնաւորութիւնն Ձեր, այսու Հայրապետական Կոնդակաւ նշանակեմք զՁեզ Հայրապետական տեղակալ եւ նախագահող Գերագոյն Հոգեւոր Խորհրդոյ Ս. Էջմիածնի...»[1]:

Քաղաքական կացությունը Խորհրդային Հայաստանում ավելի քան վատթար էր: Համայնավարական կուսակցության մենատիրությունը տիրապետող էր մեր կյանքի բոլոր բնագավառներում: XX դարի 30-40-ական թթ. համայնավարական բիրտ ու դաժան համակարգը, հայ ժողովրդի մնայուն շատ արժեքների հետ միասին, հնարավոր բոլոր միջոցներով փորձեց Հայ Եկեղեցին և հոգևոր դպրոցը նույնպես ջնջել սերունդների հիշողությունից, Եկեղեցի, որ եղել և մնում է հայ ժողովրդի հոգու և պայծառ մտքի բացառիկ ստեղծագործությունը, այն աստվածային հրաշքով ի վերուստ տրվել է մեզ ոչ միայն որպես հավիտենական հոգևոր կյանքի լուսափայլ ճանապարհացույց, այլև իր Աստվածահաստատ Մայր Աթոռով 17 դար է, ինչ եղել ու մնում է հայ ժողովրդի ինքնության, Հայրենիքի միասնության պահպանման կարևորագույն գործոնը:

Սրբազան այդ հաստատությունը դարեր շարունակ հանդիսացավ ստեղծողն ու պահպանողն ազգային մեր կրթության և դպրության: Հայ Եկեղեցին էր, որ դարձավ մեր կյանքում որպես խարիսխ, կապող ու միացնող օղակ՝ սեփական ժողովրդի բաժանված և ի սփյուռս ցրված բեկորների: Հարկ է նշել, որ համայնավարական ռեժիմին հիմնականում հաջողվեց բռնի ուժով հասնել իր նպատակին: Քանդվել ու փակվել էին հարյուրավոր եկեղեցիներ ու վանքեր, հոգևորականները գնդակահարվել կամ ուղարկվել էին սիբիրյան աքսորավայրեր:

Ամենայն Հայոց Մայր Աթոռը նույնպես գտնվում էր փակման վտանգի առջև, քանզի Ս. Էջմիածնի գիտնական եկեղեցականների մեծ մասն արդեն ոչնչացված էր: «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության» գրքի Բ հատորում հրատարակվել է հետևյալ սահմռկեցուցիչ փաստաթուղթը: Այն գրվել է 1938 թ. օգոստոսի 4-ին: Ահա այդ փաստաթղթից մի քանի տող. «...Վերջերս մահացած Խորեն Մուրադբեկյան Կաթողիկոսն ինքը դաշնակցական կուսակցության անդամ էր և հակահեղափոխական աշխատանքով կապված էր Խանջյանի, Տեր-Գաբրիելյանի և Հայաստանում աջտրոցկիստական կենտրոնի այլ անդամների հետ: 1937 թ. Էջմիածնի կաթողիկոսարանում աշխատում էին 70-75 հոգևորականներ, որոնցից շատերը ձերբակալվել են մեր կողմից՝ ակտիվ հակահեղափո-

[1] «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության», հատոր Բ, կազմեց՝ Ս. Բեհբության, Երևան, 1996, էջ 563:

խական աշխատանքի համար: Ներկայումս Էջմիածնի կաթողիկոսարանում մնացել են 7 մարդ՝ եկեղեցու սպասավորներ, որոնք դաշնակ են հակախորհրդային տրամադրություններով»[2]: Այնուհետև փաստաթղթում նկարագրվում է, որ եղած նյութերը մերկացնում են Էջմիածնի կաթողիկոսության պայքարը Խորհրդային իշխանության և հայ ժողովրդի դեմ և որպես «եզրահանգում» ասվում է. «... փակել Էջմիածնի վանքը՝ այն վերածելով թանգարանի, նոր կաթողիկոսի ընտրություններ չանցկացնել և լիկվիդացնել հայ հոգևորականության կենտրոնը՝ Էջմիածնի կաթողիկոսությունը»[3]:

Այսպիսի դաժան քաղաքական պայմաններում՝ 1938 թ. ապրիլի 10-ին Գևորգ արքեպս. Չորեքչյանը ստանձնում է Հայաստանյայց Եկեղեցու ղեկը՝ որպես նահատակ Խորեն Ա Կաթողիկոսի տեղապահ: Մայր Աթոռը այս շրջանում զրկվել էր իր գրեթե ողջ միաբանությունից, որոնց մեծամասնությունը, բացի Հոգևոր Ճեմարանից, ավարտել էին նաև մեկ կամ երկու համալսարաններ՝ Ռուսաստանում, Գերմանիայում, Անգլիայում, Ֆրանսիայում և այլուր:

Հայրապետական տեղապահ Սրբազանը Մայր Աթոռում մնացել էր երկու ծեր վարդապետների և մեկ հիվանդ եպիսկոպոսի հետ: Բարոյական և տնտեսական վիճակը հուսահատեցնող և օրհասական էր, մանավանդ որ շարունակվում էին համայնավարների բռնությունները մնացած եկեղեցականների նկատմամբ ևս:

1941 թ. հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան հարձակվեց Խորհրդային երկրի վրա: Ցոթանասունամյա իմաստուն Գևորգ արքեպս. Չորեքչյանը երիտասարդական եռանդով ձեռնամուխ եղավ՝ բարոյապես, նյութապես և գործնականորեն օգտակար լինելու մեր փոքրիկ «ածուից» հեռու ընթացող, բայց մեզ համար միշտ վտանգավոր պատերազմին: Այդ ահեղ օրերի մասին Չորեքչյան արքեպիսկոպոսն իր հայրենասիրական կոչերից մեկում գրում է. «Հայ Եկեղեցին օրհնել է հայ ժողովրդի հերոսական ոգին, ներշնչել է ազգային անկախության գաղափարը, մշակել է ազգային ինքնագիտակցության զգացումը և Խաչն ու Ավետարանը ձեռքին քաջալերելով՝ հայ ժողովրդին դեպի հաղթություն է առաջնորդել:

Իմ սիրելի հայ զավակունք, մենք այսօր հիշում ենք մեր նախնյաց հերոս ու անձնազոհ ոգին այն պատճառով, որ այսօր Դամոկլյան սրի պես վերստին կախված է մեր Հայրենիքի, ժողովրդի և Եկեղեցու գլխին ստրկացման վտանգը»[4]:

Քառամյա ահեղ պատերազմի ընթացքում Հայրապետական տեղապահ Տ. Գևորգ արքեպս. Չորեքչյանի կազմակերպչական տաղանդի արդյունքում հայ ժողովուրդը հսկայական նյութական միջոցներ տրամադրեց իմաստուն այդ մեծ եկեղեցականին, որի շնորհիվ Մայր Աթոռը կարողացավ պատերազմի թեժ օրերին երկրի հաղթանակն ապահովելու համար տրամադրել տանկային երկու շարասյուներ՝ «Սասունցի Դավիթ» և «Մարշալ Բաղրամյան» անուններով, որոնք իրոք իրենց նպաստը բերեցին վերջնական հաղթանակին: Պատերազմի հաղթական նախօրեին՝ 1944 թվականին նկատելի էր արդեն դանդաղ, բայց անդառնալի քաղաքական սառցահալքը՝ հանդեպ Մայր Աթոռը և Հայ Եկեղեցին:

---

[2] Տե՛ս նույնը, էջ 371-372:

[3] Նույն տեղում:

[4] Տե՛ս « Տ.Տ. Գևորգ Կաթողիկոսի կյանքը և գործունեությունը», Կոչ հայ ժողովրդին, Էջմիածին, 1954, էջ 134:

Դժվարությունների առջև տեղի չտվող այդ անհատականությունը՝ Գևորգ արքեպս. Չորեքչյանը, զգալով քաղաքական հարմար պահը, միայնակ կարողացավ ոչ միայն կանգնեցնել համաշխարհային քաղաքակրթության պատմության համար ճարտարապետական մեծ արժեք ներկայացնող հավատքի մեր սրբազան տաճարների ոչնչացումը, այլև՝ համառորեն փորձեց աքսորավայրերից վերադարձնել ողջ մնացած հայ հոգևորականներին: Տեղապահ Սրբազանի հաջորդ վճռական քայլը եղավ Հոգևոր Ճեմարանի վերաբացումը, որի համար դեռևս 1944 թ. հունիսի 12-ին նախօրոք ծրագրված Հոգևոր Ճեմարան ունենալու իր և իր երկու երջանկահիշատակ նախորդների՝ Գևորգ Ե և Խորեն Ա Հայրապետների երազանքն իրականացնելու համար դիմում է Խորհրդային Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ասելով, որ շուտափույթ պետք է բացվի Հոգևոր Ճեմարանը, քանզի բացվելիք հոգևոր կրթօջախն է, որ հնարավորություն պիտի տա միութենական և արտասահմանյան բոլոր հայ թեմերին ունենալու «առաջնորդներ, փոխանորդներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, քարոզիչներ, քաղաքների և գյուղերի քահանաներ, եկեղեցական և աշխարհիկ մատենագրությամբ զբաղվող գիտնականներ և այլն»[5]:

Հիշյալ պատմական ժամանակաշրջանի համար այս պահանջը խիստ անհրաժեշտ էր, որովհետև քաղաքական հայտնի դեպքերի պատճառով Հայաստանյայց Եկեղեցվո անդաստանը Հայրենիքում և մանավանդ Մայր Աթոռում գրեթե ամայացել էր իր սպասավորներից: Վերը հիշված արխիվային փաստաթղթում Գևորգ արքեպս. Չորեքչյանը գրում է նաև, որ նոր բացվելիք ճեմարանը, որը պիտի հոգա հայ ժողովրդի կրոնական, բարոյական և կրթական կարիքները, պիտի լինի գիշերօթիկ և ունենա հարմարավետ շենք, որն, իր կարծիքով, պիտի կառուցվեր բոլորովին նոր և արդիական հարմարություններով, որտեղ գալիք ուսանողությունը Ս. Էջմիածնի օրհնյալ տարածքում ապրելով և դաստիարակվելով պիտի ընտելանար կրոնական կյանքին ու ավանդույթներին:

Ներկայացված փաստաթղթում այն միտքն է հայտնվում, որ բացվելիք Հոգևոր Ճեմարանի դոները «...բաց պիտի լինեն թե՛ միութեանական և թե՛ արտասահմանյան հայության համար, որպեսզի Ս. Էջմիածինը կարողանա միատեսակ կառավարել և՛ տեղական, և՛ արտասահմանի հոգևոր հաստատությունները, և՛ նպաստե հայ ժողովրդի լեզվի, մտածելակերպի, մշակույթի միակերպության ստեղծման»[6]:

Զարմանալի հեռատեսությամբ Հայրապետական տեղապահ Տ. Գևորգ արքեպս. Չորեքչյանը փորձում էր պետության միջոցով լուծել նաև բացվելիք Հոգևոր Ճեմարանի տնտեսական ծախսերի հետ կապված խնդիրները: «Նոր բացվելիք ճեմարանը կկարոտի դրամական մեծ միջոցների, որ պիտի հոգա արտասահմանի և տեղական հայությունը: Ներկա մեր պետական կառուցվածքը նկատի ունենալով՝ պարզ է, որ տեղական հայության բաժինը պետք է կառավարությունն իր վրա վերցնի՝ ստեղծելով Ս. Էջմիածնի համար տնտեսական բազա»[7]:

---

[5] «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության», հատոր Զ, Գևորգ Զ Չորեքչյան, 1938-1955 թթ, կազմեց՝ Ս. Բեհրության, Երևան, 1999, էջ 222-223:

[6] Նույնը, էջ 223:

[7] Տե՛ս նույնը, էջ 223:

Ներկայացված փաստաթղթի շարունակության մեջ ասվում է, որ «...Նոր բացվելիք ճեմարանի լրիվ ծրագիրն իր բացատրականով և Ս. Էջմիածնի գոյության և նրա պահպանության հիմունքների մասին հիմնավորյալ զեկույցում կներկայացնենք շուտով՝ խնդրելով, որ քննարկվի այն կարևոր բոլոր ինստանցիաներում, ի պետս հարկավորության նաև կեդրոնում»[8]:

Հայրապետական տեղապահի պաշտոնական այս ծրագիր-գրությունը, ինչպես խոստացվել էր, դարձավ բացվելիք Հոգևոր Ճեմարանի ուսումնական ծրագիր, որն ընդգրկում էր վեցամյա ուսումնառության ողջ շրջանը: Ըստ այդ ծրագրի՝ ճեմարանը պետք է ունենար երկու հիմնական բաժին՝

ա. Ընդհանուր կրթական,

բ. Մասնագիտական ընդհանուր:

«Կրթական և մասնագիտական բաժինները,- ասվում էր փաստաթղթում,- ունենալու են երեքամյա դասընթաց, որովհետև հնարավոր չէ միանգամից բանալ երկու բաժիններն իրենց դասարաններով և լսարաններով: Ուստի նպատակահարմար է 1944-45 թթ. սեպտեմբերից բանալ միայն ընդհանուր կրթական բաժնի Ա դասարանը, իսկ այնուհետև հաջորդ տարիներում աստիճանաբար մյուս դասարաններն ու լսարանները:

Ընդհանուր կրթական բաժնի Ա դասարանում պետք է ընդունվեն այն անձինք, որոնք ունեն տասնամյա կրթություն: Նախատեսվում է Ա դասարանում ունենալ 20 աշակերտ»[9]:

Ներկայացված ուսումնական ծրագրի նախաբանից պարզ երևում է, որ բացվելիք Հոգևոր Ճեմարանը լինելու էր Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ծրագրով առաջնորդվող և տրամաբանական հաջորդը հանդիսացող ուսումնական կարևոր հաստատություն: Այս տեսակետն առավել հասկանալի է դառնում, երբ ծանոթանում ենք հիշյալ ուսումնական ծրագրին: Այդ ծրագիրը կազմված էր մասնագիտական բարձր իմացությամբ և մանրամասնությամբ: Այնտեղ նշվում է, որ ընդհանուր կրթական բաժնում ինչ առարկաներ պիտի դասավանդվեն՝ իրենց դասաժամերով: Դասարանական երեք լսարաններում պիտի ըստ ծրագրի ավանդվեն 17 առարկաներ, որոնցից երեքը պարտադիր կրոնական: Բարձրագույն կամ լսարանական բաժնի եռամյա դասընթացում պիտի դասավանդվեն 13 առարկաներ: Հավանաբար ճիշտ կլինի նշել, որ այս բաժնի առարկայական ծրագրի տողերի միջև մեծ հմտությամբ Գևորգ արքեպս. Չորեքչյանն իր ձեռքով ավելացրել է մի շարք առարկաներ, հիմնականում դավանաբանական, եկեղեցագիտական և պատմական, որոնց թիվն անցնում էր 10-ից:

Արխիվային հիշյալ փաստաթղթի 8-րդ էջում հաշվարկված է նաև նոր բացվելիք Հոգևոր Ճեմարանի ողջ տնտեսական, դասախոսներին և աշխատողներին վճարվելիք աշխատավարձի և 20 ուսանողների սննդի և մյուս ծախսերի տարեկան լրիվ նախահաշիվը:

Ուսումնական հիշյալ ծրագրի Ա մասը, բացի մի քանի կրոնական առարկաներից, հիմնականում միջնակարգ դպրոցական ծրագրից որակապես մի քիչ բարձր էր: Հայտնի է, որ նախկին Գևորգյան Ճեմարանի ուսումնական ծրագրերը բաղկացած էին 2 մասից՝ դպրո-

---

[8] Տե՛ս նույն տեղում:

[9] ՀՀ ազգային արխիվ, Ֆ. 409, ց. 1, գործ 2311:

ցական՝ 3 տարի, և լսարանական՝ նույնպես 3 տարի: Նախկին ճեմարանի դպրոցական բաժնի ուսումնական ծրագրերը համապատասխանում էին թեմական դպրոցների ծրագրերին, հասկանալի պատճառներով, որպեսզի ընդունվողների կրթական մակարդակը շատ չտարբերվեր միմյանցից: Բարձրագույն լսարանական բաժինը ուներ 3 տարվա կուրս՝ բարդեցված ծրագրով, որի շրջանավարտները, պաշտպանելով իրենց ավարտաճառերը, բացի հոգևոր ասպարեզից, բարձր պատրաստվածությամբ դառնում էին մանկավարժներ, գիտության մշակներ, ինչպես նաև այլ երկրներում մասնագիտական բուհական ուսումնառությունից հետո՝ բարձրագույն կրթությամբ մասնագետներ հայ կյանքի տարբեր բնագավառներում՝ օգտակար լինելով մեր երկրին, հայ դպրոցին և Հայաստանյայց Եկեղեցուն:

Համոզված ենք, որ Հոգևոր Ճեմարանի 1944-1945 ուսումնական տարվա համար կազմված ծրագրում հեղինակները Գևորգ արքեպս. Չորեքչյանի գլխավորությամբ նոր մոտեցումներ էին հանդես բերել, քանի որ վերաբացվելիք Հոգևոր Ճեմարանի առջև պետք է դրվեր մեկ խնդիր՝ ապահովել մեր Եկեղեցին բարձրակարգ, կիրթ, իրենց Հայրենիքը և Եկեղեցին սիրող հոգևորականներով, քանի որ մեր երկրի բարձրագույն ուսումնական հաստատություններն արդեն պատրաստում էին ուսյալ դասախոսներ, ուսուցիչներ, գիտության գործիչներ: Ուստի այլևս չկար դրանց պատրաստման այն մտահոգությունը, որ կրում էր նախկին Հոգևոր Ճեմարանը:

Անհրաժեշտ ենք համարում ուսումնական այդ ծրագիրը հրատարակել ամբողջությամբ:

ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Ա. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍ

Էջմիածնի համար կադրեր պատրաստելու նպատակով առաջիկա 1944-1945 ուսումնական տարվանից անհրաժեշտ է վերաբացել ճեմարանը: Ճեմարանը պետք է ունենա վեցամյա դասընթաց, որպեսզի հնարավոր լինի պատրաստել հմուտ կադրեր:

Ճեմարանը պետք է ունենա երկու հիմնական բաժին՝

ա. Ընդհանուր կրթական,

բ. Մասնագիտական:

Ընդհանուր կրթական և մասնագիտական բաժիններն ունենալու են երեքամյա դասընթաց: Որովհետև հնարավոր չէ միանգամից բանալ երկու բաժիններն իրենց դասարաններով և լսարաններով, ուստի նպատակահարմար է 1944-1945 թվի սեպտեմբերից բանալ միայն ընդհանուր կրթական բաժնի առաջին դասարանը, իսկ այնուհետև հաջորդ տարիներին աստիճանաբար մյուս դասարանները և լսարանները: Ընդհանուր կրթական բաժնի առաջին դասարանում պետք է ընդունվեն այն անձինք, որոնք ունեն տասնամյա միջնակարգ կրթություն: Նախատեսվում է առաջին դասարանում ունենալ 20 աշակերտ:

I.ա. Ընդհանուր կրթական բաժնում պետք է ավանդվեն հետևյալ դիսցիպլինները՝

1. Ուսումն Ս. Գրոց ---------- Լ ժ շաբաթ (I, II և III դասարան 2-ական ժամ շաբաթը)
2. Քրիստոնեական վարդապետություն ---------- 2 - - - - - (III դասարանում)
3. Եկեղեցական պատմություն (հայոց) ---------- 3 - - - - - (III դասարանում)
4. Եկեղեցական երաժշտություն -------- 9 - - - - - (երեքական ժամ I, II և III դասարաններում)
5. Հայոց լեզու ---------- 12 - - - -(չորսական ժամ I, II և III դասարաններում)
6. Հայոց գրականություն ---------- 5 - - - - -(II դասարան – 2 ժ., III դասարան – 3 ժ.)
7. Հայոց պատմություն ---------- 4 - - - - - (երկուական ժամ I և II դասարան)
8. Հայաստանի, Ռուսաստանի և ընդհ. աշխարհագրություն—6 - - - - (երկուական ժամ I, II և III դասարաններում)
9. Ռուսաց լեզու ----------14 - - - (I դաս. 5 ժ., II դաս. 5 ժ. և III դաս. 4 ժ.)
10. ՍՍՌՄ ժողովուրդների պատմություն --- 4 - - - (երկուական ժամ II և III դասարաններում)
11. Անգլերեն ---------- 9 - - - - (երեքական ժամ I, II և III դասարաններում)
12. Ընդհանուր պատմություն ---------- 9 - - - -(երեքական ժամ I, II և III դասարաններում)
13. Հանրահաշիվ ---------- 4 - - - - (երկուական ժամ I և II դասարաններում)
14. Երկրաչափություն ---------- 6 - - - (երկուական ժամ I, II և III դասարաններում)
15. Բնագիտություն ---------- 4 - - - (երկուական ժամ II և III դասարաններում)
16. Տիեզերագիտություն ---------- 1- - - - (մեկ ժամ III դասարանում)
17. Բնախոսություն ---------- 2 - - - (երկու ժամ I դասարանում)

Բ. Մասնագիտական երեք տարվա բաժնում (լսարաններում) պետք է դասախոսվեն հետևյալ դիսցիպլինները՝

1. Աստվածաբանություն Հին և Նոր Կտակարանների------2 ժ. (շաբաթ) (երկու ժամ II և III լսարաններում, միացյալ)
2. Ներածություն Հին և Նոր Կտակարանների ----- 2 - - - - (երկու ժամ II և III լսարաններում, միացյալ)
3. Մեկնություն Ծննդոց ---------- 1 - - - - (մեկ ժամ I լսարանում)
4. Հայոց Եկեղեցու պատմություն ----------
5. Ընդհանուր Եկեղեցու պատմություն ---------- 6 - - - (երկուական ժամ I, II և III լսարաններում) Հայոց Եկեղեցու դավանաբանություն, դավանանքների պատմություն
6. Բարոյագիտություն ---------- 2 - - - (երկու ժամ I, II և III լսարաններում, միացյալ)
7. Եկեղեցական իրավաբանություն ----- 6 - - - (երկուական ժամ I, II և III լսարաններում) կրոնների պատմություն
8. Հոգեբանություն ----------3 - - - (երեք ժամ I լսարանում)
9. Տրամաբանություն ---------- 3 - - - (երեք ժամ II լսարանում)
10. Փիլիսոփայություն ---------- 5 - - - (երկու ժամ II լսարանում և 3 ժամ III լսարանում)
11. Գրականության տեսություն ---------- 3 - - -(I լսարանում)
12. Հայոց գրականություն ---------- 5 - - - (երկու ժամ I լսարանում և 3 ժամ II լսարանում)
13. Ռուսաց գրականություն ---------- 3 - - - (3 ժամ I և II լսարաններում միացյալ)

գ. I դասարանում ավանդվելիք առարկաները

1. Ուսումն Ս. Գրոց ---------- 2 - - -
2. Եկեղեցական երաժշտություն ----------3 - - -
3. Հայոց լեզու ---------- 4 - - -
4. Հայոց պատմություն ---------- 2 - - -
5. Հայաստանի աշխարհագրություն ---------- 2 - - -
6. Ընդհանուր աշխարհագրություն ---------- 2 - - -
7. Ռուսաց լեզու ---------- 5 - - -
8. Անգլերեն ---------- 3 - - -
9. Ընդհանուր պատմություն ---------- 3 - - -
10. Հանրահաշիվ ---------- 2 - - -
11. Երկրաչափություն ---------- 2 - - -
12. Բնախոսություն ---------- 2 - - -

ընդամենը 32 ժամ

տարեկան 1280 ժ.

հաշվելով տարեկան 40 շաբաթ

դ. II դասարանում ավանդվելիք առարկաները

1. Ուսումն Ս. Գրոց ---------- 2 ժ. շաբաթական
2. Եկեղեցական երաժշտություն ---------- 3 - - -
3. Հայոց լեզու ---------- 4 - - -
4. Հայոց գրականություն ---------- 2 - - -
5. Հայոց պատմություն ---------- 2 - - -
6. Ընդհանուր աշխարհագրություն ---------- 2 - - -
7. Ռուսաց լեզու ---------- 5 - - -
8. ՍՍՌՄ ժողովուրդների պատմություն ---------- 2 - - -
9. Անգլերեն ---------- 3 - - -
10. Ընդհանուր պատմություն ---------- 3 - - -
11. Հանրահաշիվ ---------- 2 - - -
12. Երկրաչափություն ---------- 2 - - -
13. Բնագիտություն ---------- 2 - - -

ընդամենը 34 ժ. շաբաթական

տարեկան 1360 ժամ

ե. III դասարանում ավանդվելիք առարկաները

1. Ուսումն Ս. Գրոց ---------- 2 ժ. շաբաթական
2. Քրիստոնեական վարդապետություն ---------- 2 - - -

3. Եկեղեցական պատմություն (հայոց) ---------- 3 - - -
4. Եկեղեցական երաժշտություն ---------- 3 - - -
5. Հայոց լեզու ---------- 4 - - -
6. Հայոց գրականություն ---------- 3 - - -
7. ՍՍՌՄ տնտեսական աշխարհագրություն ---------- 2 - - -
8. Ռուսաց լեզու ---------- 5 - - -
9. ՍՍՌՄ ժողովուրդների պատմություն ---------- 2 - - -
10. Անգլերեն ---------- 3 - - -
11. Ընդհանուր պատմություն ---------- 3 - - -
12. Երկրաչափություն ---------- 3 - - -
13. Հնագիտություն ---------- 2 - - -

ընդամենը 34 ժամ
տարեկան 1360 ժամ

II Մասնագիտական. 3 տարվա կուրսերում պետք է դասախոսվեն հետևյալ դիսցիպլինները:

1. Աստվածաբանություն Հին և Նոր Կտակարանների ------ 70 ժամ (տարեկան), (II և III լսարաններում – միացյալ):
2. Ներածություն Նոր Կտակարանի ---------- 70 ---- (II և III դ. միացյալ):
3. Ուսումն Ս. Գրոց ---------- 70 ---- (I և II լսարաններում):
4. Քրիստոնեական վարդապետություն ---------- 70 --- (I լսարանում):
5. Կրոնների պատմություն ---------- 70 --- (I լսարանում):
6. Դավանաբանության պատմություն ---------- 70 --- (II լսարան):
7. Հայոց եկեղեցական պատմություն ---------- 175 – (I-ում – 3 ժ., II –ում -2):
8. Ընդհանուր եկեղեցական պատմություն ---------- 200 – (I -2, II -2, III -60 ժ., տ.):
9. Եկեղեցական երաժշտություն ---------- 140 – (I և II լս.):
10. Հայոց լեզու ---------- 560
    ա) Գրաբար – I, II, III = 420 ժ.
    բ) Աշխարհաբար – I, II =140 ժ.
11. Հայոց գրականություն ---------- 210 -- (I, II և III լ.):
12. Հայոց պատմություն ---------- 140 – (I և II լ.):
13. Ընդհանուր գրականութ. պատմություն ---------- 175 – (I, II, III լ.):
14. Ռուսաց գրականութ. պատմութ. ---------- 140 – (I և II լ.):
15. Ռուսաց լեզու ---------- 210 – (I, II, III լ.):
16. Տնտեսական աշխարհագրություն ---------- 70 --- (I և II –միացյալ):
17. Օտար լեզու (անգլերեն) ---------- 140 – (I և II լ.):
18. Փիլիսոփայության պատմություն ---------- 140 – (II և III լ.):
19. Տրամաբանություն ---------- 70 --- (II և III լ.):

Ընդամենը՝ 2860 ժամ (տարեկան)

ա) I կուրսում ավանդվելիք առարկաները

1. Ուսումն Ս. Գրոց ---------- 70 ժամ տարեկան
2. Քրիստոնեական վարդապետութ. ---------- 70 ---
3. Կրոնների պատմություն ---------- 70 ---
4. Հայոց Եկեղեցու պատմություն ---------- 105 ---
5. Ընդհանուր Եկեղեցու պատմություն ---------- 70 ---
6. Եկեղեցական պատմություն ---------- 70 ---
7. Հայոց լեզու ---------- 210 ---
   ա) Գրաբար ---------- 140 –
   բ) Ժամանակակից հայոց լեզու ------- 70 –
8. Հայոց գրականության պատմութ. ---------- 70 ---
9. Հայոց պատմություն ---------- 70 ---
10. Ընդհանուր պատմություն ---------- 70 ---
11. Ռուսաց գրականութ. պատմութ. ---------- 70 ---
12. Ռուսաց լեզու ---------- 70 ---
13. Տնտեսական աշխարհագրություն ---------- 70 ---
14. Կանոնական իրավունք և ՍՍՌՄ սահմանադրություն — 70 –
15. Օտար լեզու (անգլերեն)---------- 70 ---

ընդամենը՝ 1225 ժամ:

բ) II կուրսում ավանդվելիք առարկաները

1. Աստվածաբանություն Հին և Նոր Կտակարանների -- 70 ժ. տարեկան
2. Ներածություն Նոր Կտակարանի ---------- 70 ---
3. Ուսումն Ս. Գրոց ---------- 70 ---
4. Դավանաբանության պատմություն ---------- 70 ---
5. Հայոց եկեղեցական պատմություն ---------- 70 ---
6. Ընդհանուր Եկեղեցու պատմություն ---------- 70 ---
7. Եկեղեցական երաժշտություն ---------- 70 ---
8. Հայոց լեզու ---------- 210 ---
   ա) Գրաբար ---------- 140 ---
   բ) Ժամանակակից հայոց լեզու --- 70 ---
9. Հայոց գրականության պատմություն ---------- 70 ---
10. Հայոց պատմություն ---------- 70---
11. Ընդհանուր գրականության պատմություն ---------- 70 ---
12. Ռուսաց գրականության պատմություն ---------- 70 ---
13. Ռուսաց լեզու ---------- 70 ---
14. Տնտեսական աշխարհագրություն ---------- 70 ---
15. Օտար լեզու (անգլերեն) ---------- 70 ---

16. Փիլիսոփայության պատմություն ---------- 70 ---
17. Լոգիկա ---------- 70 ---

ընդամենը՝ 1330 ժամ

գ) III կուրսում ավանդվելիք առարկաները

1. Աստվածաբանություն Հին և Նոր Կտակարանների ---------- 70 ժ. տարեկան
2. Ներածություն Նոր Կտակարանի ---------- 70 ---
3. Ընդհանուր Եկեղեցու պատմություն ----------40 ---
4. Հայոց լեզու (գրաբար)---------- 140 ---
5. Հայոց գրականության պատմություն ---------- 70 ---
6. Ընդհանուր գրականություն ---------- 35 ---
7. Ռուսաց լեզու ---------- 70 ---
8. Փիլիսոփայության պատմություն ---------- 70 ---
9. Տոմարագիտություն ---------- 70 ---

ընդամենը՝ 455 ժամ

Բ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

1. Աշխատավարձ	Ամսական	Տարեկան
ա) Պրոֆեսորա-դասախոսական կազմին. 2840 ժամի=	12.000	144.000
պրոֆեսորական դրույք a 2000 ----------	2.000	24.000
բ) Ճեմարանի սեկտորին ----------	700	8.400
գ) Քարտուղարին ----------	400	4.800
դ) Մեքենագրուհուն ----------	800	9.600
ե) Հաշվեքարտ տնտեսվարին ----------	400	7.200
զ) Տեխնիկ. աշխատ. 3 հոգու 200 ռ. ամսական----------	400	7.200
է) Խոհարարին ----------	500	4.000
ը) Խոհարարի օգնականին ----------		
2. Ծախսեր		
ա) Սննդի, սպիտակեղենի, անկողնի, բուժման, //,		
լուսավորության և այլ չնախատեսված կարիքների համար		
20 ուսանողի հաշվելով յուրաքանչյուրին 25 ռուբլի օրական ---15.000		180.000
բ) Հագուստեղենի, ուսումնակ. գրասենյակային ---------	5.000	60.000
Ընդամենը՝ [10]	37.400	450.800

[10] ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 409, ց. 1, գ. 2311:

Ներկայացված ուսումնական ծրագրի համաձայն նոր բացվելիք Հոգևոր Ճեմարանը մասնագիտական բնույթ պետք է ունենար, առավելությունը տալով կրոնական և եկեղեցագիտական առարկաներին, որոնք հստակ արտահայտված են ուսումնական ծրագրում:

Ըստ այդ ծրագրի՝ ճեմարանի վեցամյա դասընթացը պետք է նպաստեր այնքան անհրաժեշտ եկեղեցականների, թե՛ կուսակրոն և թե՛ ամուսնացյալ, պակասը լրացնելուն: Ներկայացված այս ուսումնական ծրագիրն ավելի է արժեվորվում, քանի որ նրանում մեծ թվով առարկայական հավելումներ են կատարվել զուտ մասնագիտական առումով Հայրապետական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի ձեռքով:

Ավելացված առարկաները հիմնականում կրոնական և հայագիտական էին, որոնք հաստատում էին այդ մեծ անհատականության իմացությունը նաև մանկավարժության և ուսումնագիտական գործում: Ուսումնական ծրագիրը լիարժեք ապահովում էր մեր Եկեղեցու կարիքների միանգամայն նոր պահանջները, որոնք բխում էին մեր Սուրբ Եկեղեցու համար նվիրյալ եկեղեցականներ պատրաստելու թելադրանքից:

Ներկայացված ծրագիրը նպատակային էր նաև այն իմաստով, որ ընդունվող ճեմարանականները պետք է ունենային երկու շատ կարևոր հատկանիշներ՝ եկեղեցասիրություն և հայրենասիրություն: Հոգևոր ասպարեզում գործող անձնավորությունը միանշանակ պիտի ոչ միայն ըստ ամենայնի սիրի և նվիրվի Հայ Եկեղեցուն, այլև իր մաքրափայլ կյանքով օրինակ լինի իրեն հանձնված հոտին: Ինչ վերաբերում է եկեղեցականի հայրենասիրությանը, հպարտանալու շատ օրինակներ կան:

Հայ Եկեղեցու պատմությունը մեզ սովորեցնում է, որ մեր հավատքի հայր Ս. Գրիգոր Լուսավորչից մինչև մեր օրերը հիմնական դասերը Հայ Եկեղեցու պատմության եղել ու մնում են հավատքն ու հայրենասիրությունը:

Ըստ ներկայացված ուսումնական ծրագրի՝ ինչպես հին Գևորգյան Ճեմարանը, այնպես էլ 1945 թ. վերաբացված հոգևոր մեր կրթօջախը նույնպես գիշերօթիկ պետք է լիներ, որտեղ բոլոր սաները ապրելու էին մի մեծ ընտանիքի նման, որը բոլորին միացնելու էր քրիստոնեական ջերմ սիրով, ուր տիրապետելու էր եղբայրասիրությունն ու ընկերասիրությունը: Այսօրվա Հոգևոր Ճեմարանի անցած վեց տասնամյակը հաստատում է անառարկելի այս ճշմարտությունը:

Նաև հարկ է շեշտել, որ Հոգևոր Ճեմարանը գտնվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, որտեղ 405 թ. մեր երկու սրբերի՝ Ս. Սահակի և Ս. Մեսրոպի ձեռամբ ստեղծվեցին մեր սքանչելի գիրն ու առաջին մեսրոպյան հայալեզու դպրոցը: Ս. Էջմիածնից է, որ մեր Սրբազան Հայրապետները խոսել են իրենց հոտի հետ: Եվ, վերջապես, սրբազան այդ վայրի ամեն մի թիզ հողը նվիրական է, որի վրա քայլողն իր հոգու աչքերով կկարողանա տեսնել մեր մեծերի ոտնահետքերն անգամ: Բնականաբար այս ամենը ճեմարանի տված դաստիարակության ու կրթության հետ դրական մեծ ազդեցություն են թողնում ամեն մի ճեմարանցու վրա:

Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը 1944 թ. հունիսի 12-ի ուսումնական ծրագիրը նույն թվականին էլ ներկայացրել է Խորհրդային Հայաստանի կառավարությանը: Դժբախտաբար չհաջողվեց գտնել կառավարության պատասխանը: Դրանից կարելի է ենթադրել, որ ամենայն հավանականությամբ այն մնացել է անպատասխան, քանզի Խորհրդային ի-

խանությունները կրոնական հաստատությանը առհասարակ գրավոր չէին պատասխանում: Հավանաբար հենց այդ էր պատճառը, որ Ամենայն Հայոց Հայրապետական տեղապահը մի նոր գրությամբ դիմում է Հայաստանի կառավարությանը: Ահա այդ փաստաթղթից մի հատված.

«Միութենական երկրների և արտասահմանի հայոց եկեղեցական կյանքի կարիքները մեզ թելադրում են խնդրել կառավարությունից, որ թույլատրե բանալ Ս. Էջմիածնում Հոգևոր Ճեմարան, որպեսզի հնարավորություն ունենա Ս. Էջմիածինը, որ Հայոց Եկեղեցու ղեկավար կեդրոնական հաստատությունն է, մատակարարել թե՛ միութենական, թե՛ արտասահմանի բոլոր թեմերին առաջնորդներ, փոխառաջնորդներ, Գեր. Հոգ. Խ-ի անդամներ, քարոզիչներ, քաղաքների և գյուղերի քահանաներ, եկեղեցական և աշխարհիկ մատենագրությամբ զբաղվող գիտնականներ և այլն: Ահա այդ ճեմարանավարտներն են, որ ամենուրեք պիտի կառավարեն Հայ եկեղեցիներն ու եկեղեցական հաստատությունները, հոգան հայ ժողովրդի կրոնական, բարոյական և կրթական կարիքները: Նրանք են, որ պիտի մտնեն միաբանության շարքը, բարձրացնեն նրա կրթական ցենզը, նրա դերը և ճշմարիտ կրոնական ոգի ներշնչեն հայ ժողովրդին:

Նոր բացվելիք ճեմարանը պիտի ունենա հարմարավոր շենք, որ նոր պիտի շինվի. սակայն առայժմ հնարավոր է օգտագործել Ս. Էջմիածնի նախկին շենքերից մեկը, որ հարմար կլինի նորա նպատակին:

Նոր բացվելիք ճեմարանը գիշերօթիկ պիտի լինի, որ աշակերտությունը Ս. Էջմիածնի ծոցում դաստիարակվելով ընտելանա կրոնական կյանքին ու տրադիցիաներին և դյուրությամբ վանական կամ քահանայական ասպարեզ մտնի: Նոր բացվելիք ճեմարանի դռները բաց պիտի լինեն թե՛ միութենական և թե՛ արտասահմանի հայության համար, որպեսզի Ս. Էջմիածինը կարողանա միատեսակ կառավարել և՛ տեղական, և՛ արտասահմանի հոգևոր հաստատությունները, և նպաստե հայ ժողովրդի լեզվի, մտածելակերպի, մշակույթի միակերպության ստեղծմանը:

Նոր բացվելիք ճեմարանը կկարոտի դրամական մեծ միջոցների, որ պիտի հոգա արտասահմանի և տեղական հայությունը: Ներկա մեր պետական կառուցվածքը նկատի ունենալով՝ պարզ է, որ տեղական հայության բաժինը պետք է կառավարությունը իր վրա վերցնե՝ ստեղծելով Ս. Էջմիածնի համար տնտեսական բազա:

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի բացման և պահպանության խնդիրը դժվարին և պատասխանատու լինելու պատճառով մտադիր ենք այդ հարցի վախճանական որոշումը՝ ի շարս այլ կարևոր խնդիրների, դնել առաջիկայում գումարվելիք Ազգային-եկեղեցական ժողովի առաջ:

Նոր բացվելիք ճեմարանի լրիվ ծրագիրն իր բացատրականով և Ս. Էջմիածնի գոյության և նրա պահպանության հիմունքների մասին հիմնավորյալ զեկուցում կներկայացնենք շուտով, խնդրելով որ քննարկվի այն կարևոր բոլոր ինստանցիաներում, ի պետս հարկավորության, նաև Կեդրոնում:

Ազգընտիր տեղակալ
ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ»[11]:

---

[11] «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության.», հ. Զ, Գեորգ Զ Չորեքչյան, 1938-55 թթ., կազմեց՝ Ս. Բենիության, Երևան, 1999, էջ 222-223:

Գրության ոճից և բովանդակությունից հստակ զգացվում է Հայրապետական տեղապահի զգուշավոր լավատեսությունը, ինչպես նաև բացվելիք Հոգևոր Ճեմարանի հետ կապված մտահոգությունները բազմաթիվ չլուծված խնդիրների վերաբերյալ: Մենք, որ մի քիչ ծանոթ ենք այդ շրջանի պետություն-Եկեղեցի հարաբերությունների խնդիրներին և մեխանիզմին, նրանց ժխտական կեցվածքին՝ Մայր Աթոռի կողմից ներկայացված հարցերի նկատմամբ, չենք բացառում, որ սույն գրությամբ Գևորգ արքեպիսկոպոս Զորեքչյանն իշխանություններին շատ նուրբ դիվանագիտությամբ փորձում էր հասկացնել, որ այս անգամ չպետք է կրկնվի 1926 թվականին Խորհրդային իշխանությունների՝ Գևորգ Ե Կաթողիկոսին տրված ճեմարանի բացման խոստումը, որն այդպես էլ չկատարվեց:

Գևորգ արքեպիսկոպոս Զորեքչյանը մի նոր գրությամբ Ս. Էջմիածնում Հոգևոր Ճեմարան բանալու համար 1944 թ. կրկին դիմում է Հայաստանի խորհրդային կառավարությանը: Այս դիմումը ուներ հետևյալ խորագիրը «Բացատրական, Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի ծրագրի և կազմակերպության առթիվ»: Երեք մեքենագրական էջերում Ազգընտիր տեղապահը՝ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Զորեքչյանը, մանկավարժական մեծ հմտությամբ բացատրում և հիմնավորում է, որ Ս. Էջմիածնում բացվելիք Հոգևոր Ճեմարանը երեք լսարաններով և եռամյա դասընթացով չի կարող շարունակական լինել, որովհետև առանց դասարանական եռամյա ուսուցման, ուսումնական գործընթացում ընդհատում տեղի կունենա և ամեն ինչ կխանգարվի: Տեղակալի գրավոր բացատրությունը հիմնավորված էր ամեն առումով: Նրանում բացատրված հարցերն ու պատասխանները փաստորեն դարձան վերաբացվող Հոգևոր Ճեմարանի 6-ամյա ուսուցման հիմնաքարը:

Բացատրականին կից կա նաև բացվելիք Հոգևոր Ճեմարանի դասարանական և լսարանական բաժիններում ավանդվող առարկաների ցուցակը անվանումներով և ժամաքանակներով: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ առարկայական հենց այդ ցանկն էլ դարձավ Հոգևոր Ճեմարանի վեց տարիներին դասավանդվող ողջ առարկայացանկը կամ ուսումնական պլանը: Այս կարևորությունը հաշվի առնելով մենք այսու ներկայացնում ենք այն ամբողջությամբ.

«Բացատրական

Ս. Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանի Ծրագրի եւ Կազմակերպութեան առթիւ

Ի հետեւումն Մեր Դիմումի ստացել ենք Խորհրդային Հայաստանի Կառավարութեան համաձայնութիւնը բանալու Ս. Էջմիածնում Հոգեւոր Ճեմարան երեք լսարաններով, եռամեա դասընթացով: Յայտնելով շնորհակալութիւն Խ.Հ-ի Կառավարութեան Մեր դիմումին սիրով ընդառաջելուն համար Մենք պարտք ենք համարում ներկայացնել նրան Մեր տեսակետները ճեմարանի դասընթացը ընդլայնելու անհրաժեշտութեան մասին, բանալով նաեւ Միջնակարգ դպրոց եռամեա դասընթացով, նախկին Սեմինարեաների ծրագրով: Իբրեւ անկախ Միութիւն և իբրև նախապատրաստական դպրոց Հոգեւոր Ճեմարանի համար:

Մեր տեսակետը բխում է Հոգեւոր Ճեմարանի, որպէս բարձրագոյն դպրոցի էութիւնից, որ ունի աստուածաբանական-պատմական թեքում. այլ եւ Արտասահմանում եւ Միութեան սահմաններում ապրող Հայութեան կենսական շահերից, որք են հետեւեալները.

1. Հոգևոր ճեմարանը երեք լսարաններով, ինչպէս իւրաքանչիւր կրթական հաստատութիւն, իր գոյութիւնը կանոնաւոր պահելու համար, պիտի ունենայ ուսանողների մշտական կոնտինգենտ, որոնք նախապէս ստացած պիտի լինեն միջնակարգ կրթութիւն նայելով բարձրագոյն դպրոցի նպատակին, եօթամեայ, տասնամեայ եւ տեխնիկում: Առանց այս յենակետի բարձրագոյն դպրոցը կամ առանց ուսանողութեան կմնայ և կամ կունենայ պատահական ուսանողութիւն, որի պատճառով բարձրագոյն դպրոցը իր ծրագիրը սեղմել, յարմարեցնելով այն ուսանողութեան պատրաստութեան, որով կը փոխուի նրա մասնագիտական գոյնը: Այս չարիքից խուսափելու միակ ելքը հենց սկզբից Սեմինարիա ունենալու միջոցն է, որ կը մատակարարէ պատրաստուած ուսանողութիւն ընդունակ իրացնելու Հոգեւոր Ճեմարանում աւանդուելիք առարկաները:

2. Այս տեսութիւնը, որ ընդհանուր է բոլոր բարձրագոյն դպրոցների համար, պէտք է նկատի առնել նաեւ յատկապէս Հոգեւոր Ճեմարանի նկատմամբ, որ նպատակ ունի լուծելու առանձնայատուկ խնդիրներ, որոնք կապ ունին իրական կեանքի կոնկրետ պայմանների հետ: Հոգեւոր Ճեմարանի յատուկ խնդիրներն են. ա. Տարեց տարի մատակարարել քաղաքներին եւ գիւղերին քահանայութիւն, բ. Պատրաստել կուսակրօն հոգևորականութիւն՝ պաշտօնավարելու համար Խորհրդային Միութեան եւ Արտասահմանի այլ եւ այլ գաղութներում Իրանից մինչև Անգլիա եւ Հնդկաստանից մինչև Ամերիկա, որոնք ունեն կեանքի իւրայատուկ պայմաններ, եւ վերջապէս՝ գ. Կը լինեն եւ այնպիսիները, որոնք ումանկավարժական ասպարեզ կը մտնեն եւ կամ Հայ Եկեղեցու եւ հայոց պատմութեան ուսումնասիրութեանը կը նուիրուեն:

Հոգեւոր Ճեմարանը միայն լսարաններով, առանց միջնակարգ դպրոցի, պարզ է, որ անկարող է բաւարարել վերոյիշեալ պահանջներին, յատկապէս քահանաներ մատակարարելու պահանջին: Կրթութեան եւ դաստիարակութեան ու ազգային մշակոյթի զարգացման համար միակ օջախը:

3. Հոգեւոր Ճեմարանի ուսանողները 18 տարեկանից փոքր լինելու չեն: Խորհրդային դպրոցների ներկա ռեալ պայմաններում նշանակում է, որ լսարան կարող են մտնել համալսարանաւարտները կամ տասնամեա դպրոցներ և տեխնիկումներ աւարտողները: Յոյս դնել համալսարանաւարտների վրա կարելի չէ, քանի որ նոցա առաջ բաց է Պետական կրթական և արդիւնաբերական բազմատեսակ գործունէութեան ասպարէզներ: Համալսանաւարտ ուսանողներ Հոգեւոր Ճեմարանում կարող են լինել բացառիկ երեւոյթներ, յամենայն դէպս, ոչ գիւղական քահանաներ դառնալու համար:

Լսարանի հիմնական դասատուութեան առարկաները պահանջում են գրաբարի և յունարէն լեզուի հիմնական գիտութիւն, որոնք պետական միջնակարգ դպրոցներում չեն աւանդում: Գրաբար լեզուն անհրաժեշտ է Ս. Գրքի մեկնութեան, Եկեղեցական եւ Հայոց Պատմութեան աղբիւրների ուսումնասիրութեան, Հին Գրականութեան եւ այլ առարկաների համար, որոնց բոլորի աղբիւրները գրաբար են: Գրաբարը կարեւոր է նաեւ Նոր Կտակարանի եւ Ընդհանուր Եկեղեցու Հայրերի գրութեանց ընթերցման համար: Այս պահանջը

ջին բաւարարել կարող է միայն եռամեայ դասընթաց ունեցող միջնակարգ դպրոցը, ինչպէս ցոյց է տուել ճեմարանի անցեալ փորձը: Միայն այս եղանակով հնարաւոր է լուծել վերոյիշեալ բոլոր խնդիրները, այլ եւ ուսանողութիւն պատրաստել Հոգեւոր Ճեմարանի լսարանների համար, որոնք ի վիճակի լինեն Լսարաններում աւանդուելիք առարկաները իւրացնելու և արդիւնաւորելու:

4. Հոգեւոր Ճեմարանի միջնակարգ Բաժինը ոչ միայն անհրաժեշտ է Լսարանների համար, իբրեւ օժանդակ միջոց, այլեւ եւ ոչ պակաս կարեւոր է նաև իբրեւ անկախ միջնակարգ դպրոց, ընդհանուր կրթութիւն տուող եկեղեցական թեքումով, յատկապէս գիւղական քահանայութիւն պատրաստելու համար: Այս դէպքում Հոգևոր Ճեմարանի միջնակարգ բաժինը կը լինի ոչ թէ նախապատրաստական դպրոց Լսարանների համար, այլ ինքնուրոյն անկախ դպրոց՝ իր ուրոյն նպատակով:

5. Հոգեւոր Ճեմարանի Սեմինարական Բաժնի երկու նպատակի ծառայելը, այն է իբրեւ նախապատրաստական դպրոց Լսարանների համար եւ իբրեւ միջնակարգ կրթարան քահանայութիւն պատրաստող անհրաժեշտ է եւ էական, որ ճանապարհ է հարթում գաղութահայ մատաղ սերնդի առաջ բանալով Հոգեւոր Ճեմարանի դռները: Արտասահմանի հայ Գաղութները, բացի Երուսաղէմից և Անթիլիասից, չունեն ազգային միջնակարգ դպրոցներ եկեղեցական բնոյթ կրող: Առաջ այդ նպատակին ծառայում էր Գէորգեան Հոգեւոր Ճեմարանը, որին այսօր պիտի փոխարինէ ներկայ Հոգեւոր Ճեմարանը. պէտք է ենթադրել եւ յուսալ, որ Գաղութահայութիւնը այսօր էլ կ'ուղարկէ իր զաւակներին Հոգեւոր Ճեմարան ուսանելու: Գաղութահայ ուսանողութիւնը, չունենալով միջնակարգ հոգեւոր դպրոցներ, բնականաբար կարող է գալ եւ մտնել Հոգեւոր Ճեմարանի միջնակարգ բաժինը: Այսպէս ուրեմն Հոգեւոր Ճեմարանը, շնորհիւ իր սեմինարական Բաժնի, կը դառնա Գաղութահայութեան համար ազգային կրթութեան և դաստիարակութեան ու ազգային մշակոյթի զարգացման համար միակ օջախը:

6. Հոգեւոր Ճեմարանի աստուածաբանական առարկաների մասնագէտ դասատուներ սկզբի տարիները դժուար կը լինի գտնել. ուստի անհրաժեշտ պէտք կը լինի հրաւիրել Երուսաղէմի եւ Անթիլիասի ընծայարաններն ավարտողներից նոցա, որոնք մասնագիտորէն ուսումնասիրել եւ ուսումնասիրում են աստուածաբանութիւն անգղիական եւ ամերիկական համալսարաններում: Ապագայում այս խնդիրը կը լուծուի ինքնին, քանի որ ճեմարանը ինքը կը պատրաստէ մասնագէտ դասատուներ:

7. Հոգեւոր Ճեմարանի լսարանական առարկաների թիւը, եթէ միջնակարգ դպրոց չը բացուի, կը հասնի 40-50-ի, որ անկարելի է տեղաւորել վեցօրեակում: Տես 1 պատկեր: Այս հանգամանքը պիտի ստիպէ մեզ առարկաների կրճատման դիմել, որը կը լինի ի վնաս դասընթացի: 2-րդ պատկերը, որ կազմուած է միջնակարգ դպրոցի բացման նախատեսութեամբ, հնարաւոր կը դառնա անցնել դասընթացը:

8. Հոգեւոր Ճեմարանի համար Մեր կազմած ծրագիրը նման է Ուղղափառ Եկեղեցու բարձրագոյն Ինստիտուտի ծրագրին, որ ունի երեք տարուայ դասընթաց և թեմերում աստուածաբանական կուրսեր երկու տարուայ դասընթացով, որոնք պիտի լինեն նախապատրաստական դասընթացներ Ինստիտուտի համար:

Միակ առարկութիւնը, որ կարող է արուել այս տեսակէտի դէմ, այն է, որ ներկայումս հայ կեանքում հոգեւորականութեան, մանաւանդ բարձր հոգեւորականութեան պահանջը մեծ է. ուստի պէտք է արագացնել նրանց պատրաստութեան խնդիրը: Այս հարցը տեխնիքական բնոյթ ունի և դիւրին լուծելի է: Պէտք է միաժամանակ բանալ եւ միջնակարգ դպրոցի եւ լսարանի առաջին դասարանները եւ մենք երեք տարուց յետոյ կ'ունենանք երկու բաժանմունքներից աւարտողներ. միաժամանակ նաեւ լսարան մտնող ուսանողներ, աւելի պատրաստ, քան նախընթացները:

Մեր կազմած Ծրագիրը արգասիք է մեր խորին համոզման, որ հիմնուած է մեր քսանամեա դասատուութեան փորձի, Մեր հիմնական ծանօթութեան նախկին Գէորգեան Ճեմարանի ծրագրին, այլ եւ օտար աստուածաբանական ֆակուլտետների ծրագրերին:

Ազգընտիր Տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետութեան

Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի երեք սեմինարական դասարաններում ավանդվելիք առարկաները և նրանց բաշխումն ըստ դասարանների և լսարանների ու ժամերի քանակը

	Դ դաս.	Ե դաս.	Զ դաս.	Ա լսար.	Բ լսար.	Գ լսար.
1. Հին և Նոր Ուխտի պատմություն	2 ժամ	2 ժամ				
2. Գործք Առաքելոց և Առաքել. Թղթեր	2 ժամ	2 ժամ				
3. Կարգ աստվածպաշտության			2 ժամ			
4. Ուսումն Սուրբ Գրոց	2 ժամ	2 ժամ				
5. Քրիստոնեական վարդապետություն			2 ժամ			
6. Բարոյագիտություն			2 ժամ			
7. Հայոց Եկեղեցու պատմություն	2 ժամ	2 ժամ	2 ժամ			
8. Հայոց պատմություն	2 ժամ	2 ժամ	2 ժամ			
9. Հայաստանի աշխարհագրություն	3 ժամ					
10. Հայոց լեզու, գրաբար	4 ժամ	4 ժամ	4 ժամ			
11. Հայոց լեզու, աշխարհաբար	3 ժամ	3 ժամ	3 ժամ			
12. Ռուսաց լեզու և գրականություն	4 ժամ	4 ժամ	4 ժամ			
13. Անգլերեն	3 ժամ	3 ժամ	3 ժամ			
14. Հունարեն	3 ժամ	3 ժամ	3 ժամ			
15. Հայոց գրականություն հին և նոր	3 ժամ	3 ժամ	3 ժամ			
16. Եկեղեցական երգեցողություն	3 ժամ	3 ժամ	3 ժամ			
Եվրոպական երգեցողություն	1 ժամ	1 ժամ	1 ժամ			

	Դ դաս.	Ե դաս.	Զ դաս.	Ա լսար.	Բ լսար.	Գ լսար.
1. Ներածություն Հին Կտակարանի				2 ժամ	---	---
2. Ներածություն Նոր Կտակարանի				---	2 ժամ	---
3. Աստվածաբանություն Հին Կտակարանի				2 ժամ	---	---

4.	Իսրայելի պատմություն	2 ժամ	---	---
5.	Աստվածաբանություն Նոր Կտակարանի	---	2 ժամ	---
6.	Հիսուսի կյանքը	---	2 ժամ	---
7.	Ընդհանուր և Հայոց Եկեղեցու պատմություն, հարակից դավանաբ.	2 ժամ	2 ժամ	2 ժամ
8.	Քրիստոնեական Եկեղեցու մատենագրություն, հարակից Հայաստանյայց Եկեղեցու մատենագրություն-հայրաբանություն	2 ժամ	2 ժամ	---
9.	Հայոց Եկեղեցու աշխարհայացք կամ Հայոց Եկեղեցու դոգմատիկա	---	---	2 ժամ
10.	Բաղդատական դավանաբանություն	---	---	2 ժամ
11.	Էթիկա	---	---	2 ժամ
12.	Գործնական աստվածաբանություն	---	---	2 ժամ
13.	Եկեղեցական իրավագիտություն	---	---	2 ժամ
14.	Կրոնների պատմություն	2 ժամ	2 ժամ	---
15.	Մեկնություն Սուրբ Գրոց	-		
16.	Հայ մատենագրություն	3 ժամ	3 ժամ	---
17.	Գրաբար	2 ժամ	2 ժամ	2 ժամ
18.	Աշխարհաբար	1 ժամ	1 ժամ	1 ժամ
19.	Հայոց հին և միջին դարերի գրականություն	3 ժամ	---	---
20.	Հայոց նոր գրականություն	---	2 ժամ	---
21.	Հայոց պատմություն-աղբյուրների ուսումնասիրություն, սեմինարական աշխատանքներով	մ	ի ա	g յ ա լ
22.	Փիլիսոփայության պատմություն	2 ժամ	2 ժամ	2 ժամ
23.	Հոգեբանություն	2 ժամ	2 ժամ	2 ժամ
24.	Հայոց եկեղեցական մատենագրություն	2 ժամ	2 ժամ	2 ժամ
25.	Ռուսաց լեզու և մատենագրություն	2 ժամ	2 ժամ	2 ժամ

Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի երեք լսարաններում ավանդվելիք առարկաներ և նոցա բաշխումը ըստ լսարանների ու ժամերի քանակը

	Ա լսարան	Բ լսարան	Գ լսարան
1. Ներածություն Հին Կտակարանի	3 ժամ	---	---
2. Ներածություն Նոր Կտակարանի	---	3 ժամ	---
3. Աստվածաբանություն Հին Կտակարանի	2 ժամ	---	---
4. Իսրայելի պատմություն	2 ժամ	---	---
5. Աստվածաբանություն Նոր Կտակարանի	---	3 ժամ	---
6. Հիսուսի կյանքը	---	2 ժամ	---

7. Ընդհանուր և Հայոց Եկեղեցու պատմություն, հարակից դավանաբանությամբ	3 ժամ	3 ժամ	3 ժամ
8. Քրիստոնեական Եկեղեցու մատենագրություն, հարակից Հայոց Եկեղեցու մատենագրություն-հայրաբանություն	3 ժամ	3 ժամ	
9. Հայոց Եկեղեցու աշխարհայացք կամ Հայոց Եկեղեցու դոգմատիկա	---	---	3 ժամ
10. Բաղդատական դավանաբանություն	---	2 ժամ	---
11. Էթիկա	---	---	2 ժամ
12. Գործնական աստվածաբանություն	---	---	2 ժամ
13. Եկեղեցական իրավագիտություն	2 ժամ	2 ժամ	---
14. Կրոնների պատմություն	3 ժամ	3 ժամ	---
15. Մեկնություն Սուրբ Գրոց	3 ժամ	3 ժամ	3 ժամ
16. Հունարեն լեզու	3 ժամ	3 ժամ	3 ժամ
17. Անգլերեն լեզու	3 ժամ	3 ժամ	3 ժամ
18. Գրաբար	3 ժամ	3 ժամ	3 ժամ
19. Աշխարհաբար	3 ժամ	---	---
20. Հայոց հին և միջին դարերի գրականություն	---	3 ժամ	---
21. Հայոց նոր գրականություն			
22. Հայոց պատմություն, աղբյուրների ուսումնասիրություն,	2 ժամ	2ժամ	2 ժամ
սեմինարական աշխատանքներ	1 ժամ	1 ժամ	1 ժամ
23. Փիլիսոփայության պատմություն	2 ժամ	2 ժամ	2 ժամ
24. Հոգեբանություն	3 ժամ	----	----
25. Հայոց եկեղեցական մատենագրություն	2 ժամ	2 ժամ	2 ժամ
26. Ռուսաց լեզու և մատենագրություն	4 ժամ	4 ժամ	4 ժամ
27. Եկեղեցական երգեցողություն	3 ժամ	3 ժամ	3 ժամ[12]»

[12] ՀՀ ազգային արխիվ, ֆ. 409, ց.1, գործ 2340: